ոմ՝ երթիցուք, բանս կենաց յաւիտենական ունիս,,*)։

Բազմութեան սրտի ուրախութիւնն բացայայտ փայլում էր երեսների վերայ, և ամենի բերանից հնչվում էր՝ օրհնութիւն, գոհութիւն և փառք Աստուծոյն անմահի և բարերարի, որ ամենայն ժամանակ պատրաստ է լսել իւր խոնարհ որդւոց աղաղակը, և կատարելով նոցա բարի խնդիրներն՝ բաւականացնել և մխիթարել այս և այն կեանքումն։ Երևանայ Հայ-քրիստոնեայ բազմութիւնն Նինուէացւոց ապաշխարութեամբն ապաշխարելով՝ համարեա թէ որդիական իրաւունքի ուժով**) ստացաւ յամենողորմ Աստուծոյ՝ իւրեանց խնդրելիքն՝ և բաւականացան։ Բազմութիւնն այնքան էր, մինչև որ հրապարակներն՝ սկսած Առաջնորդական եկեղեցւոյ զաւթիցն՝ մինչև հանդուստանի կարգը կատարման տեղին՝ փրոված՝ տարածված էր, որ առաջին անգամն էր ինձ տեսանել Երևան այնքան բազմութիւն։

Հոգևոր հանդէսն կատարելուց զկնի՝ նոյնպիսի կարգով և շարականներով վերադարձանք նոյն իսկ բազմութեան հետ միասին՝ Ս. Սարգիս եկեղեցին. ուր և ,,Հովիւ քաջ՞և հովիւ բարի,, զօրաւոր աղօթքով օրհնելով ժողովրդեանն՝ աւարտեցինք հանդիսակատարութիւնն. և իւրաքանչիւրքս ուրախ ուրախ գնացինք մեր գործին, և երկիրն ընդունեց երկնից քաղցր ցօղը՝ նախախնամութեամբ վերին Տեսչութեանն. որում այժմ և միշտ փառք, պատիւ և երկրպագութիւն. ամէն։

ՄԵՍՐՈՊ Վ. ԱՐԴԱՊԵՏ ՍՄԲԱՏԵԱՆՑ.

Երևան

(*) Յոհան Զ. 69։

(**) Մատթ. ԺԱ. 12։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՄՈՍ ԿՈՄԵՈՆԻՈՍ ԵՒ ՆՈՐԱ ԴԻՏԱԳԻԴԱ ՄԱԿՆԱ։

(Շարունակութիւն)

ԺԷ-ԲՈՂ ԳԼԽԻՑ

ԱՄԵՆԱՊԻՒՐԻՆ ԿԵՐՊՈՎ ՈՒՍՈՒՑԱՆԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐ.

ԱՌԱՋԻՆ ԿԱՆՈՆ

Ամենայնը դէպ անպէս է նէ՝ պատրաստուած, որ նորա մէջ բոլոր պայմանները լինին՝ որոշեալ յաւ գործելու համար։

Զուի մէջ գոյացած ձագը շարժուում է, վախճանական զոյութիւն առնելը պահանջելով, և ծնվում է՝ կեղևի տակից ազատուելով. նա ազատութեամբ կառչը բաց է անում՝ կերակրուելու համար. նա ինքն վարժում է իւր թևերը, միով բանիւ, նորա մէջ կայ ամենայն գործողութիւն առնելու զրդիռ։

Ամ որ աշակերտներին ուսում է զրդում այն ժամանակ, երբ նորա ուսանել չեն ցանկանում, նա անբնական է վարվում։ Զուի կերակուրը փսխեցնում է, վատ մարսուածը — ցաւ է պատճառում։ Իսկ քաղցած ստամքսը լաւ է մարսում կերակուր։ Ուսոի և Սոկրատեսը ասաց՝ ,,Ուսումնասէրը շատ բան կուսանի". իսկ Քուինտիլիանոսը ասաց. "Ուսման փափաքը ոչ այլ ինչ է, եթէ ոչ յօժար կամք, որ ստիպմամբ երբէք չի զրդուել"։

Ուսոի նախ և առաջ հարկաւոր է աշակերտների մէջ բորբոքել և զրդռել սէր առ ուսում,

և ապա զասատուութեան եղանակը պէտք է գիւրացնէ աշակերտներին ուսման ընթացքը, որպէսզի նորա նոցանից չը զզուին։

Իսկ բարբառումն և զրոյցումն առ ուսումնարարիութիւն զրանում է ծնողներէն, վարժապետներէն, ուսումնարաններէն, նոյն ինքն առարկաներէն, ոճէն և Հոգեբարձութիւնէն։

Ծնողներից՝ եթէ նորա որդւոց ներկայութեանը ժամանակ զոյում են ուսեալներին, երբ նոքա յարգում և պատուում են վարժապետներին։

Վարժապետներից՝ եթէ նորա մանուկների հետ վարվում են բարեկամաբար, հայրաբար, մտերմաբար, եթէ նորա չափաւորապէս գովում և պարգևատրում են, եթէ նորա ամենայն բան պատշաճաւորապէս բացատրում են նոցա։

Ուսումնարանից՝ եթէ նա ախորժելի տեղ է, եթէ նա բոլոր հարկաւոր պիտոյքներով մատակարարված է՝ պատկերներով, քարտէզներով, գաղափարներով, թանգարանի մթերքներով, եթէ նորա մէջ կան ընդարձակ գաւիթ խաղալու համար և պարտէզ զբօսանքի համար նոյն։

Նոյն իսկ առարկաներից՝ երբ նորա բովանդակի են մանկական խելքին, երբ նորա աշակերտներին ներկայանում են ոչ միայն իւր գիտական կողմանէ, այլև զբաւեցուցիչ կողմանէ։ Մինչև օրս աւէտը անբաժան պէտք է լինի ախորժելու հետ։

Դասատուութեան եղանակէն՝ երբ նա բնական է, հեռացնում է բոլոր արդիւնաբեր հանգամանքները, բոլոր անժամանակ երկրորդական դիտելիքները, երբ նա խոր ապրում է իրրև կրթեցուցիչ տարը և հանդիսանում է կենդանի խոսակցութեան ձևով, երբ նորա մէջ նպատակին յարմար գործադրում են հանելուները, առարկաներ, փոխաբերութիւններ նոյն։

Հոգեբարձութիւնից՝ երբ իրապէս հոգում է քննել և վարձատրել ջանասէրներին։

ԵՐԿՐՈՐԴ ԿԱՆՈՆ

ԲՆԱԿԱՆԸ ԱՆՔՆԱԿ ԻՆՉ ՓՈՓՐ, ԲԱՅՑ ՉՐԻՆՔ ՈՎՔԲԱՆԱՎԵՆ Ի ԲԱՅԱՑՈՒՄ։

Ընչն՝ ինչից որ պէտք է թռչուն զոյանայ, զանգուած է մի կամիրի մէջ և շրջապատած է կեղևով. դորա մէջ պարունակուած է ապագայ բովանդակ թռչունը։

Բովանդակ ծառը զոյանում է փոքրիկ կարծանրից, որի մէջ կենդանական զօրութիւն կայ։

Այս կանոնի ընդ դէմ ուսումնարաններում ապաստարիկի կերպով մեզանչում են։ Վարժապետները ծիլ են տնկում այն տեղ, ուր հարկաւոր էր սերմ ցանել, — տնկում են ծառ ծիլեր միայն հարկաւոր են։ Գլխաւոր գիտունքների տեղ, նորա աշակերտներին գիտութեան հետևանքներ տալիս են, այսինքն՝ տալիս են լոկ միայն խառնուրդ բառերի զումար։

ԵՐՐՈՐԴ ԿԱՆՈՆ

ԲՆԱԿԱՆԸ ՀԵՂԻՆ ԴԺՎԱՐԻ Է ԱՆՑՆՈՒՄ։

Թռչունը նախ սովորում է թևերը շարժել, յետոյ՝ թևերը թափ տալ և վերջապէս փորձում է օդի մէջ վերանալ։

Իսկ ուսումնարաններում սովորաբար ընդ հակառակն են գործում. աշակերտին կանոններ հաղորդում են Լատինական լեզուով (մի՞թէ որ իսկ մարդ Արարի լեզու նոր սովորողին կանոններ Արարերէն է հաղորդեր)։ Գերմանացի աշակերտին որ օտար լեզու սկսում է սովորել, տալիս են վարժապետ, որ Գերմաներէն չգիտէ։

Ուստի հարկաւոր է՝ Ա.) որ վարժապետը աշակերտները մի և նոյն լեզուով խօսում լինի։ Բ.) որ բոլոր իրական բացատրութիւնները մայրենի լեզուով կատարում լինին։ Գ.) որ գիտութիւնները և բառարանները իւրաքանչիւր լեզուին առանձին յարմարացուցած լինին։ Դ.) որ օտար լեզու ուսանելիս աշակերտները նախ սովորին հասկանալ, յետոյ գրել, և ապա միայն խօսել։ Ե.) որ բոլոր առարկաները այնպէս կարգաւորած լինին, որ յայտնին անցյայտից առաջ, միշտաւորին հեռաւորից առաջ։ (Կանոնները ցատրելու համար օրինակները մանկական կեանքից պէտք է քաղած լինին՝ և բովանդակի նոյն հասկացողութեան։) Զ.) որ նախ վարժուին աշակերտները արտաքին զգայարանքներ, յետոյ յիշողութիւնը, և ապա բանականութիւնը։ Ամենագիտութիւնը արտաքին զգայարանքից է սկսում։

ՍՏԱՑՎԱԾ Է 1971 Թ.

և երևակայութեան միջոցաւ անցանում է յիշողութեան մէջ, ապա համեմատութեան միջոցաւ առհասարակ ընդլայնանում է հասկացողութիւնը, վերջապէս և դատողութիւնը։

ՉՈՐՐՈՐԴ ԿԱՆՈՆ

Բնութիւնը ինքեան չէ ծանրաբեռնում. այլ սակաւով բաւականանում է։

Մի ձուէն նա միայն մի թռչուն է պահանջում, Ոգին ցրւում է, երբ աշակերտի առաջև մի և նոյն ժամանակ զանազան առարկաներ են հանդիսանում, երբ նա մի տարուայ ընթացքում պէտք է ուսանէ Քերականութիւն, Ճարտասանութիւն, Տրամաբանութիւն, Բանաստեղծութիւն, Յունաց լեզու ևլն.

ՀԻՆԳԵՐՐՈՐԴ ԿԱՆՈՆ

Բնութիւնը չէ շտապում, այլ համբերութեամբ է առաջ գնում։

ՎԵՑԵՐՐՈՐԴ ԿԱՆՈՆ

Բնութիւնը ոչինչ չէ ձեռնարկում, որ ինչ խակ է ներքնում, այլ նա արտաքս չէ հանում։

Իսկ վարժապետը յաճախ երեխաներին ստիպում է այն բան անել, ինչ որ նոցա զօրութեանց գերազանցում է.

ԽՕԹՆԵՐՐՈՐԴ ԿԱՆՈՆ

Բնութիւնը իւր արարածներին նպաստում է, որ զարգանան։

Իսկ վարժապետը յաճախօրէն անգթաբար է վարվում, դաս է տալիս՝ և չի մեկնում. բայց երբ աշակերտները պահանջածը չեն կատարում, վասն զի չէին կարող կատարել, նա նոցա պատժում է.

ՈՒԹԵՐՐՈՐԴ ԿԱՆՈՆ

Բնութիւնը ստեղծում է՝ ինչ որ միայն օգտաւէտ է։

Իսկ վարժապետը շատ սակաւ է ուսուցանում այնպիսի բան, որը պիտանի լինէր կեանքում.

Ժ Ը-րդ ԳԼՈՒԽ
ՀԻՄՆԱԻՈՐ ՈՒՍՈՒՑԱՆԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐ.

Փորձը ցոյց է տալիս, որ սակաւ մարդիկ հիմնաւոր կրթութիւն են ստանում ուսումնարաններում. նոցանից մեծ մասը շատ թեթև կրթութիւն ունի.

Սորա պատճառը 1) այն է, որ ուսումնարանները ապարդիւն գործերով են պարապած, և արհամարհում են ամեն բան, ինչ որ հիմնաւոր է, և 2) այն է, որ վարժապետները այնպէս են ուսուցանում, ինչպէս որ իւրեանք ուսել են, այսինքն՝ հաղորդելու բանը չապաւորելով աշակերտների մէջ.

Այս պակասութիւնը կարելի է լրացնել՝ բնութեան հետևելով, թէ նա ի՛նչպէս է հաստատութիւն տալիս իւր արարածներին.

Պէտք է միշտ աշխատել, 1) որ հաղորդուի այն, ինչ որ իրօք օգտաւէտ է, 2) որ բոլոր առարկաները հաղորդուին անընդհատ, 3) որ ամենայն բանի համար հաստատուն հիմք դրուի, 4) որ հենց այդ հիմունքները պատճառաւոր խորութիւն ունենան, 5) որ ամենայն բանը հաստատուած լինի միայն այդպիսի հիմունքների վերայ, 6) որ բոլոր զանազանելին զանազանուի, 7) որ միշտ հետևեալը հիմնուի նախընթացի վերայ, 8) որ բոլորը՝ ինչ որ իրարու հետ կապ ունին՝ կապուին, 9) որ բոլոր կարգաւորուելիները կարգաւորուին բանականութեան, յիշողութեան և լեզուի վերաբերութեամբ, և 10) որ բոլորը անընդհատ վարժութիւններով արմատանան.

Այժմ այդ բոլորը առանձին առանձին քննենք։

ԱՌԱՋԻՆ ԿԱՆՈՆ

Բնութիւնը ոչինչ չէ սկսում, որ ինչ անպիտան է։

Նա թռչունին ձկան թևի չի տալիս, ձեռքեր և չորս ոտեր չի տալիս, այլ փետուրներ, թևեր ևլն. ծառին նա ականջներ, փետուրներ և այսպիսի բաներ չի տալիս, այլ կեղև, միջուկ, արմատ ևլն։

Ով որ կամենում է պտղատու դաշտ ունենալ՝ կամ պտղատու պարտէզ, նա բնութեան է հետևում, այսինքն՝ վայրենի խոտ չի ցանում և փուշ չի տնկում.

Ճարտարապետը՝ որ կամենում է ամուր շինութիւն ունենալ, հաստատուն նիւթ է ընտրում, և ոչ յարդ կամ ուռի։

Ուստի ուսումնարաններում պէտք է միայն այն հաղորդել, ինչ որ իրական օգուտ է բերում։

Մեր կեանքը կարճ է, ո՞չ ապաքէն յիմարութիւն է՝ ժամանակը անօգուտ բաների ծախսել։

ԵՐԿՐՈՐԴ ԿԱՆՈՆ

Բնութիւնը ուրիշ տեղից ոչինչ չէ մոռանում, որ ինչ օգտակար է համարում իր աճեցմանելի մարմնի համար։

Թռչուն գոյացնելու ժամանակ նա չի մոռանում ոչ գլուխ, ոչ ճանկեր եւն։

Այսպէս և ուսումնարանները՝ բարոյական մարդ գոյացնելիս՝ պէտք է գոյացնեն այնքա՛ն կատարեալ, որ նա ընդունակ դառնայ որպէս վիճակեալ կենաց գործերին, նոյնպէս և հանդերձեալ կենաց, ուր բոլոր երկրայինը դառնում է իւր վախճանական նպատակը։

Ուստի ուսումնարաններում պէտք է տանել ոչ միայն գիտութիւններ, այլ և բարք ու կրօնական տեղեկութիւններ։ Գիտնական կրթութիւնը վարժում է մարդու բանականութիւնը, լեզուն և ձեռքերը, որպէս զի նա կարողանայ ամենայն օգտաւէտ բանը քննել, դատել և կատարել։ Ոչ ինչ բանի մէջ պակասութիւն չպէտք է լինի. ապա թէ ոչ՝ եթէ՛ զոր օրինակ՝ մարդուս բարք ու կրօնաւորութիւնը ուղղես և աճեցնես, իսկ միտքը կիսատ զարգացնես, խկոյն թերութիւնները կերեւան, շէնքը կլինի անհիմն։ Միմիայն ամենայն կողմից լիութեամբ յօղուած ամբողջութիւն է հիմնաւոր և արդիւնաւոր։

ԵՐՐՈՐԴ ԿԱՆՈՆ

Բնութիւնը ամէն բանին հաստատ հիմք և արմատ է դնում։

Ծառի մէջ նախ արմատն է կազմւում, և ապա նա վեր է բուսնում։ Այդպիսով առանց արմատի ծառ չի տնկւում։

Այսպիսի արմատ ձգելու մասին՝ վարժապետները գլխովին մոռանում են, վասն զի 1) աշակերտների մէջ չեն գրգռում ուսումնասիրութիւն, չեն զարգացնում նոցա մէջ ուշադրութիւն, և 2) չեն նախապատրաստում և չեն մեկնում նոցա սկսելի ուսման ընդհանուր գաղափարը։

Ուստի հարկաւոր է 1) մինչև ուսում սկսելը՝ աշակերտի մէջ գրգռել սէր առ ուսումն, ապացուցանելով նորա գերազանցութիւնը, օգուտը և քաղցրութիւնը. 2) նախ և առաջ բացատրել լեզուի կամ ճարտարութեան գաղափարը, և ապա նոցա մասնաւորութիւնները։ Նախ ընդհանուր սահմանք, և ապա բովանդակ կատարումն։

ՉՈՐՐՈՐԴ ԿԱՆՈՆ

Բնութիւնը խոր արմատներ է ձգում։

Այսպէս և ուսանելի առարկայի գաղափարը խոր պէտք է լինի արմատացած։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԿԱՆՈՆ

Բնութիւնը ամենայն ինչ արմատից է աճեցնում, և ոչ թէ որ և իցէ ուրիշ տեղից։

Բովանդակ ծառը, իւր բոլոր մասնաւորութիւններով՝ բնով, կեղևով, տերևներով, ծաղիկներով, պտուղներով՝ արմատէն է ելանում. այլ թէպէտև նորան անձրևը արբուցանում է, այնու ամենայնիւ նորա ճիւղերի մէջ այլօրէն ջուր չի մտնի, բայց եթէ ո՛չ՝ ներքևից վերև ամբառնալով։ Թռչնի փետուրները ևս ուրիշ թռչնից չեն առնում, այլ նորա վերայ բուսնում են ներքևից։

Ջրհորները ջուր առանում են իւրեանց աղբիւրից։

Սորանից հետևում է, որ մանուկներ կրթել այն չէ նշանակում, երբ ստիպում ենք նոցա մատենագիրներից բաղմութիւն բաների, դարձուածքների, նախադասութիւնների ժողովել, այլ երբ նոցա առաջ իրերի խորհրդաւոր քողը բաց ենք անում, այնպէս որ բոլորը բղխէ, ինչպէս վտակը բղխում է աղբիւրից, ինչպէս տերևները, ծաղիկները և պտուղները ելանում են ծառից։ Նոքա միայն հեղինակներին վեր ի վերոյ թերթում էին, և նոցանից դուրս էին գծլում առանց իսկական իմաստը հասկանալու, ու ժողովում էին դարձուածքներ, նախադասութիւններ և մտքեր՝ առանց կարգ ու կանոնի։

Դատարկ բառերի և վանկերի համար մոռացուած է գլխաւոր իրը, նոցա էութիւնը։ Գերազանց են համարում շեղուած ճանապարհը այնտեղ, ուր կարելի էր ուղիղ ճանապարհով նպատակին հասանել։

Այս թերութիւնը դաստուութեան սխալ ոճիցն է յառաջանում։ Ուսումնարանները ուսուցանում են ուրիշի աչքերով տեսանել, պճնազարդ լինել ուրիշի սրտով. չեն ցոյց տալիս և չեն բերում նոցա աղբիւրների մօտ, այլ ցոյց են տալիս և բերում են աղբիւրներից բղխող վտակների մօտ։ Բառարանները խօսել չեն կարող սովորեցնել. նոքա հասկանալ միայն սովորեցնում են։ Քերականութիւնը նախադասութիւն կազմել չի ուսուցանում, այլ վերլուծել։ Արիստոտէլէսի բնագրով ֆիզիքայ ուսանել անկարելի է. դորա համար հարկաւոր են աչքեր և փորձ։ Հրահանգներից բարոյականութիւն ուսանել անկարելի է, այդ պէտք է ուսուցանեն սիրտը և բանականութիւնը։

Ճարտարագէտները այդ կողմանէ խեղացութեամբ են վարվում։ Ճարտարապետը՝ տուն շինելու ժամանակ՝ աշակերտներին փորձով ցոյց է տալիս, թէ ո՞րպիսի նիւթ է հարկաւոր ամենայն մի մասի համար, թէ ի՞նչպէս ամենայն բան պէտք է կտրուի, ռանդուի, չափուի և պնդացնուի։ Միանգամ նկատելով բազմութեան եղանակը, դժուար չէ այնուհետև նոյնը վերլուծել։ Տուն քանդելու և շոր քանդելու միջոցով ո՛չ ոք չէ սովորել տուն շինել և շոր կարել։

Սխալ ոճի վնասները անտերկրայելի են։ Նախ և առաջ՝ բազմաթիւ մարդկան՝ եթէ ոչ ամենեցուն՝ կրթութիւնը միմիայն բառագիտութիւն է դառնում, իմաստների և կանոնների հասարակ մեքենագործութիւն, որ չգիտեն՝ թէ ի՞նչպէս պէտք է գործադրել։ Երկրորդ՝ կրթութիւնը ոչ մի մարդու մէջ չի հասունանում՝ մինչև մի այնպիսի ընդհար գիտութեան, որ ինքը իւրեան պահպանէր և ամրացնէր, և ամենայն կողմ ճիւղաւորուէր, ընդհակառակն՝ նա մնում է կցկտուր՝ կարկտաններից կազմուած և չմիաւորացրած ո՛չ մի տեղ։ Իսկ ճշմարիտ կրթեալ մարդը ծառին է նման, որ հաստատուած է արմատի վերայ, կենդանութիւն է վայելում իւր սեպհական հիւթից և իւր զօրութիւնից, ուստի և կանաչում է, աճում է և բերում է ընտիր պտուղներ։

Այս վէրքը կարելի է նոխաւ բժշկել, որ մարդիկ ուսանել սկսեն ոչ թէ գրքերից, այլ կարողութեան չափ բնութեան մեծ և պայծառ գրքից, երկնքից և երկրից, կաղնիներից և ուռիներից։ Ուսանողը պէտք է ինքը տեսանելը սովորէ։ Ուստի 1) բոլորը պէտք է իրերի անխախտ սկզբունքներից բղխէ. 2) ոչինչ չպէտք է ուսանել՝ միայն հեղինակութեան վերայ հիմնուելով. բայց ամենայն ինչ պէտք է ներկայացնուի զգայական տեսողութեան, և բանականութեան առաջև քննութեան ենթարկուի. 3) երբէք պէտք չէ գործ դնել միայն վերլուծական եղանակ, բայց զլխաւորապէս պէտք է ընդունել և բաղադրական եղանակ։

ՎԵՑԵՐՈՐԴ ԿԱՆՈՆ

Որքան շատ է օգուտը որի համար որ քնութիւնը որ և իցէ բան ուսանելու է, այնքան նա նուրբ ընտրութիւնների է անում։

Որքան շատ յօգուածներ կան կենդանու վերջաւորութիւնների վերայ, այնքա՛ն բազմատեսակ են նորա շարժողութիւնները։ Զին եղից շարժուն է. մեղեսը շարժուն է խխունջից. ինչու ծառը լայն արմատով առաւել պինդ է հաստատուած։

Ուստի երեխաներին կրթելիս ևս պէտք է հոգալ, որ ամենայն ինչ կատարուի այնպէս, որ ոչինչ չրմնայ վարագուրուած։ Որպէս ուսուցանողը, այնպէս և ուսանողների՝ պէտք է երկուսն էլ իմանան՝ թէ ո՛ւր և ի՞նչ պէտք է առնեն։ Այս հիման վերայ պէտք է մշակուած լինին բոլոր դասագրքերը։

ԵՕԹՆԵՐՈՐԴ ԿԱՆՈՆ

Ընութիւնը մէկ առաջ է քնում, երբէք չդադարելով և ոչ մի նոր բան չի ուսանում, մինչև որ չի վերլուծել ոչնչը։

Ինչ որ բեղմնաւորութեան ժամանակ պէտք է դառնայ գլուխ, ոտ, սիրտ, նա չի փոխում իւր վիճակը և աճում է ըստ վիճակի կատարելութիւն ստանալու։ Ծառի վերայ գոյացած ոտները՝ մնում են, բայց այնպէս՝ որ տարէ ցտարի իւրեանցից

նորանոր ճիւղեր են ծնում, և մի և նոյն ժամանակ անդադար աճում են։

Ուստի ուսումնարաններում պէտք է 1) բոլոր պարապմունքները այնպէս կարգաւորուին, որ յեստագայները միշտ նախընթացների վերայ հիմնուին, բայց և սոքա մի և նոյն ժամանակ հեռաւորներից հաստատուին. 2) բոլոր հաղորդածը, լաւ հասկացածը պէտք է յիշողութեան մէջ հաստատուի։

ՈՒԹԵՐՈՐԴ ԿԱՆՈՆ

ԲՈՒՆԸ ՄԻՆՉ ԲԱՆ ՊՐՈՇԵԼ ԿԱՐԻ Է ԿՈՐԾՈՒ։

Նա անդամը անդամի հետ է միաւորում, ոսկորը ոսկորի հետ, ջիղ ջղի հետ ևն. նա ծառի բունը միաւորում է արմատի հետ, ոստերը բնի հետ, ճիւղերը ոստերի հետ, ծաղիկները ճիւղերի հետ ևն։ Ճարտարապետը նոյն օրէնքի է հետևում։

Այս տեղից հետևում է, որ 1) բոլոր կեանքի պարապմունքները այնպէս պէտք է լինին կարգաւորած, նոցանից մի այնպիսի համօրէն գիտութիւն կազմուին, ուր բոլորը մի արմատիցն են բղխում, և իրաքանչիւրը պատշաճաւոր տեղ ունի բրուած. 2) ամենայն ինչ այնպէս պէտք է լինի հաղորդուած և հաւաստիքներով հիմնուած, որ երկբայութիւն և մոռացումն տեղի չունենան։ Հաղորդուած բանը հաւաստիքներով հաստատելը՝ նշանակում է ամենայն բան ցոյց տալ իւր ղուգակշիռ պատճառներով, այսինքն՝ ոչ միայն ասել՝ թէ ի՞նչ է այս կամ այն բանը, և թէ ո՞րպէս է դա, բայց թէ՝ ուստի՞, ինչո՞ւ համար է դա, և թէ ի՞նչ պատճառով դա չի կարող մի այլ բան լինել։ Այսպէս է գտնուում հիմնաւորութիւնը և հաստատամտութիւնը,—որոնք որքան գեղեցիկ ունակութիւններ են մարդուս համար, այնքան և թանկագին։

Ուստի ուսումնարաններում ամենայն ինչ պէտք է ցոյց տրուի իւր պատճառաբանութեամբ։

ԻՆՆԵՐՈՐԴ ԿԱՆՈՆ

ԲՈՒՆԸ ՈՐՄՈՒՆ ԵՒ ՈՍՏԵՐԻ ՄԷՋ ՊՐՈՇԵԼ ԿԱՐԻ ԲՈՒՆԻՆ է ՊԱՀՊԱՆՈՒՄ, ԵՒ ՊԱՀՊԱՆՈՒՄ է ՊՐՊԷՍ ԱՌԱՆՈՒՆԻՆՄԲ, ՆՈՅՆՊԷՍ ՊՐԱԿՈՒՆԻՆՄԲ։

Որպէս արմատը հողի տակ զօրեղ կամ թոյլ է զարգանում, նոյնպէս և զօրեղանում կամ թուլանում են ոստերը հողի վերայ։ Ի հարկէ որ այդպէս ևս պէտք է լինի։ Եթէ ծառը վերևից առատութեամբ աճէր, այն ժամանակ հաստատ կանգնել չէր կարող. իսկ եթէ նա միայն ներքևից աճէր, այն ժամանակ ոչինչ օգուտ չէր բերել. վասն զի պտուղները ոստերի վերայ են բանում, և ոչ արմատի վերայ։ Այսպէս և կենդանիներու արտաքին անդամները որոշեալ չափաւորութիւն ունին ներքին մասերի հետ։

Այսպէս պէտք է լինի և մանուկներին կրթելիս։ Կրթութիւնը պէտք է հիմնուի, ծագի և պընդանայ հասկացողութեան ներքին արմատի վերայ. այնուհետև նա պէտք է նպատակին յարմար արտաքս ճիւղաւորուի, որպէս զի օգուտ բերէ։

Ուստի հարկաւոր է, որ Ա) երբոր որ և իցէ բան աշակերտները հասկացան, իսկոյն պէտք է նոցա մեկնել, թէ ի՞նչ օգուտ կրբերէ իւրեան վաստակած գիտելիքը, Բ) բոլոր հասկացածը ուրիշներին ևս հաղորդուի, որպէս զի դատարկօրէն ոչինչ չուսանել։ Քոյ գիտութիւնը անպէտ է՝ եթէ մի այլ ոք չգիտէ, թէ ի՞նչ է դա։

ՏԱՍՆԵՐՈՐԴ ԿԱՆՈՆ

ԲՈՒՆԸ ՅԱՃԱԽՍՈՐԷՆ ԾԱՌԸ ՀՈՂՄԻՑ ԵՐԵՐՈՒՄ Է։

Որքան յաճախսորէն ծառը հողմից երերուում է, այնքան նա լաւ է աճում, այնքան նա խոր է տանում իւր արմատը։ Բոյսերը վնասվում և ամբանում են անձրևից, կարկտից, որոտումն և կայծակից։

Դարբինը երկաթը տաքացնում և պողպատի է դարձնում այն միջոցով, որ նա շուտ շուտ տաքացնում և ջրի մէջ է ձգում նորան։

Սորանից պէտք է հետևցնել, որ կրթութիւնը հաստատահիմն չի լինի, մինչև որ շուտ շուտ կրկնութիւններ և վարժութիւններ գործ չդրուին։ Այսօրինակ վարժութիւնների ամենագեղեցիկ եղանակը մեզ ցոյց է տուած մարմնոյ սննդարար զօրութիւններում։

Ուստի նա է բաղմացնում կրթութիւն, ով որ Ա) միշտ ոգեկան կերակուր է որոնում, Բ) գտած կերակուրը մշակում է և մարսում է։

Այս երեք միջոցը ցոյց է տուած հետևեալ առակի մէջ.

"Շատ հարցնել, հարցրածը ըմբռնել, ըմբռնածը հաղորդել". այս երեք բանը աշակերտին վարժապետից գերազանցացնում է։

Ինչ որ յայտնի չէ, պէտք է հարցնել վարժապետից, դասակիցներից, գրքերից։ Ըմբռնումը այն ժամանակ կատարւում է, երբ իմացած և հասկացած բանը յիշողութեան է գրւում։ Իսկ հաղորդումը այն ժամանակ, երբ իմացած և ըմբռնածը տրւում է ուրիշին։ Վերջին իրողութիւնը շատ քիչ է գործ դրւում. բայց պէտք է այդ բանը սովորութիւն անել. որովհետև դա ամրացնում է և աներկբայելի օգուտ է բերում։ Ուրիշին ուսուցանելով, մենք ինքներս ուսանում ենք։

Այս կանոնը այն ժամանակ է ճիշդ կատարւում, երբ վարժապետը նախ ինքն է ուսուցանում, և յետոյ ուսանողին պատուիրում է ուսուցանել, և ուսուցանել նոյն իսկ եղանակով և նոյն իսկ կարգով, ինչպէս ինքը սովորեցաւ։

Այդ վարժմունքը ահա ինչ օգուտ է բերում. Ա) դորանով վարժապետը աշակերտներին կըպարտաւորէ ուշադիր լինել (ի՞նչպէս աշակերտը կըկարողանայ ուսուցանել, եթէ նա ուշադիր չէր). Բ) վարժապետը այդ ժամանակ համոզւում է, թէ արդեօք ամենայն աշակերտը հասկացաւ այն բոլորը՝ ինչ որ ինքը պատմեց. Գ) այսպէս անդադար կրկնելիս վերջապէս առաջ կերթան և դանդաղ գլուխները. Դ) այդ կերպով դասը մինչ այն աստիճան կըմբռնուի, որ դժուար մոռանալու կըդառնայ. Ե) այս վարժութիւններից զրգռւում է աշակերտների խելքը և ուսումնասիրութիւնը։

(Շարունակելի)

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ Ի ԲԵՌԼԻՆ

(Շարունակութիւն և վերջ։)

Պ. Հոֆֆմանի ամեն դրութիւնքը բովանդակ ժողովի կողմէն միաձայն ընդունուեցան, և 1½ ժամին առաջին օրուայ նիստը աւարտեցաւ։ 3 ժամին հանդիսականք գնացին մի կոնսեռ լսելու. իսկ երեկոյեան վերստին հաւաքուեցան գործաւորներու ընկերութեանը պատկանեալ մեծ դահլիճի և պարտէզի մէջ. ուր վարժապետները մի փառաւոր ընթրիք և խնճոյք պատրաստած էին։ Զմայլեցուցիչ՝ անմոռանալի ժամերը՝ որ ես շնորհ ունեցայ վայելել այն գիշեր, տկար գրչովս չեմ կարող ես նկարագրել . . . . . ։

Երկրորդ օրը ամենէն առաջ խօսեց Պ. Վիխարդ Լանգէն "Հռենոսեան Թերթերու" խմբագիրը, մանկավարժական ընկերութեան սիրելին, ժողովի սիրտը, ինչպէս որ և ստեպ կ'անուանուի իր ազատ և կորով մտքի՝ տարօրինակ զօրեղ լեզուի և եռանդուն հայրենասիրութեան համար։ "Վարժարանը դաստիարակչական սկզբունքներու վրայ."— այդ խնդրի մասին էր նորա մեծ ճառը, որ բոլոր հանդիսականներու սիրտը յափշտակեց և անթիւ ծափահարութեամբ ընդմիջեցաւ, թէև նա յանպատրաստից խօսած էր։

Աւասիկ այդ ճառի համառօտ պարունակութիւնը։

Իւրաքանչիւր սերունդ երկու մասն ունի. մէկ մասը կազմուած է չափահասներէն, միւսը երիտասարդներէն։ Չափահասները պարտաւոր են կեանքի գործը կատարել, այսինքն՝ Կուլտուրի յառաջադիմութեանը սպասաւորել և ջանալ, որ նա որքան կարելի է՝ շուտ ընթանայ։ Կուլտուր ասելով Պ. Ատենախօսը կը հասկանայ 'այն բարոյական ու նիւթական միջոցները, զոր մարդս բնութեան հետ մաքառելով ձեռք բերած է, և այն յառաջադէմ փոփոխութիւնը, որ նա ինքը այդ միջոցին կրած է։ Իբրև կուլտուրին սպասաւորող գործաւոր, անհատական մարդը միայն մի միջոց է նպատակի համար. սակայն որպէս իւրաքանչիւր արարած աշխարհիս վրայ, այո որպէս և իւրաքանչիւր առողջ անդամ օրգանիզմի մէջ, մարդս չէ թէ միայն մի լոկ միջոց է նպատակի համար, այլ և ինքը նպատակ, այսինքն թէ նորա կենաց վսեմագոյն խորհուրդը նորա սեփական ազատ անձի կրթութիւն ու զարգացումն է։ Երկաթուղիներու և հեռագիծներու օրերը, երբոր 'տարածութեան ու ժամանակի դէմ մահու չափ պատերազմ քարոզուած է, երբ որ մարդկային գործունէու-